

# ԾՐԱԳԻՐ

ՀԻՒԱՆԴՈՒԹԵԱՆ ԵՒ ԲԺՇԿՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ ՆԻՒԹԵՐ ՀԱԽ-  
ՔԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Ա. ԶԵՂԻՆՍԿՈՒ.

## Ա.

ՄԵՐԴԿԱՆՑ ՎԵՐԸԲԵՐԵԱԼ.

I. ՀՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՐՑԵՐԻ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ:

1) Բնակութեան տեղի ֆիզիքական դրութիւնը, տեղագրութիւնը, տեղի բարձրութիւնը ծովի մակերեսոյթից, կլիման եւ այլն:

2) Խմելու ջրի տեսակները եւ նրանց յատկութիւնները: Մաքրում են արդեօք խմելու ջուրը եւ ինչ կերպով: Բերել խմելու ջրի քիմիական բաղադրութիւնը, եթէ յայտնի է:

3) Բացատրել բնակութեան տեղի (գիտի, քաղաքի եւ այլն) տների դասատրութիւնը մէկ-մէկու վերաբերութեամբ եւ փողոցների լայնութիւնը: Մաքրում են արդեօք փողոցներն ու հրապարակները եւ ո՞րտեղ են ժողովում կամ ի՞նչ են անում աղբը: Չորացնում են արդեօք թրիքը եւ ո՞րտեղ են պատրաստում փթիը:

4) Նկարագրել տների ծեւը, նրանց յարմարութիւնը տարուայ զանազան եղանակների համար առողջապահական տեսակէտից:

5) ի՞նչպէս են ձմեռը տաքացնում քնակարանը, ի՞նչ տեսակ վառարաններ են գործ ածում (թոնիր, մանղալ, բուխարի եւ այլն):

6) ի՞նչպէս են օգտում վառարանների տաքութիւնից (քուրսու տակ նստելը, քնել քուրսու շորս կողմը, ոտները մտցնելով նրա տակ, մանղալի վրայ ծեռներ տաքացնելը եւ այլն):

7) Գոյութիւն ունի՞ն արեեօք օդաներ (միանայ) գոմերում, իբրեւ ձմեռուայ քնակարան: Ե՞սը են օգտում օդաներից՝ ցերեկը թէ գիշերը:

8) Շինո՞ւմ են արտաքնոցներ եւ ի՞նչպէս են մաքրում նրանց, ի՞նչպէս են վարում արտաքնոցներ շեղածդէսլքում:

9) Ի՞նչ են անում տներում հաւաքուած աղբը եւ ընտանի սատկած կենդանիների դիակները:

10) Չե՞ն համարում վարակիչ այն ջուրը, որի մէջ լուանում են մեռեալի դիակը, ի՞նչ են անում այդ ջուրը:

## II. ՄԱՔՐՈՒԹԵԱՆ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ:

11) Արեեօք գիտերում կա՞ն բաղնիսներ, տարուայ ընթացքում քանի՞ անզամ են բաղնիս գնում:

12) Տանը լողանո՞ւմ են թէ չէ, քանի՞ անզամ տարուայ ընթացքում. լողանո՞ւմ է կինը դաշտանից յետոյ, ամե՞ն շաբաթ լուանում է նա իւր գլուխը եւ ոտները: Լուանո՞ւմ է տղամարդը իւր գլուխը եւ ոտները, ե՞րբ, քանի՞ անզամ շաբաթուայ, ամսուայ, տարուայ ընթացքում:

13) Գո՞րծ են ածում սալոն, չողան (Salicornia), գիլ, ձու, մածոն եւ այլ որանց նման նիւթեր լողանալու կամ լուացուելու ժամանակ:

14) Սովորութիւն կայ լուանալ ներքնազգեստը, վերնազգեստը եւ անկողինը, ե՞րբ եւ քանի անզամ տարուայ մէջ:

15) Սափրո՞ւմ են գլուխները թէ չէ, ի՞նչ նշանակութիւն են տալի գլխի սափրելուն:

16) Սափրում են կամ փետում են սեռական անդամի կողմերի մազերը: Կայ ցեխ (Նուրայ) դնելու սովորութիւնը, քանի անգամ տարուայ ընթացքում սափրում են կամ փետում են յիշեալ մազերը, կամ ցեխ են դնում նրանց անհետացնելու համար: Ի՞նչ նշանակութիւն են տալիս այս սովորութեանը:

### III. ԳԻՒՂԱԿԱՆ ԲԺԻՇԿԱՐԻ ՄԱՍԻՆ:

17) Ովքեր են գիւղերում բժշկութեամբ պարապում (յիշել նրանց անունը եւ ազգանունը):

18) Կա՞ն արդեօք գիւղական բժիշկներից մասնագէտներ հիւանդութեան միտերի մէջ, օր. ոսկրաբելութեան, աշքացաւի, վիրաբուժութեան եւ այլն:

19) Կա՞ն արդեօք միզաքար հանող բժիշկներ, պարապում են բժիշկները եւ անդամատութեամբ:

**ԾԱՀԱՅՔ.** Ցանկալի է նկարագրել այսպիսի բժիշկների գործիքները:

20) Ով է արին առնում, գրեխ, տղրուկ, սրուակ կամ կոտոշ դնում:

21) Պարապում են արդեօք գիւղական սափրիչները բժշկութեան գործով եւ ի՞նչ տեսակ հիւանդութիւններ են բժշկում:

22) Կա՞ն ժողովրդի մէջ ծաղիկ կտրողներ, հաւասում է ժողովուրդը ծաղիկ կտրելուն:

23) Ի՞նչպէս է վերաբերում ժողովուրդը ոչպի ուսում ստացած բժիշկները:

24) Գո՞րծ են ածում տեղական բժիշկները ծեռագիր կամ տսլած բժշկաբաններ: Մանրամասն տեղեկութիւն տալ այսպիսի բժշկաբանների մասին:

### IV. ԲԺՇԿԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐԵԼ:

25) Ցուցակագրել դեղեր պատրաստելու գործածելի

նիւթերը, հանդերձ տեղական եւ գիտնական անուններով:

26) Ցուցակագրել բոլոր տեղական վայրենի եւ լեռտանի քոյսերը, որոնք գործ են ածում դեղեր պատրաստելու համար, եւ նկարագրել նրանց ժողովելու, պահելու եւ գործածելու եղանակը:

**Ծառայ.** Ցանկալի է գրել քոյսերի թէ տեղական (ժողովրդական) եւ թէ գիտնական անունները: Եթէ նիւթ ժողովողին յայտնի չէ քոյսերի գիտնական անունները, այն ժամանակ թողնա կազմէ նրանցից ժողովածու (արբարիա) եւ ուղարկէ նիւթերի հետ:

27) Նկարագրել ամեն տեսակի դեղերը պատրաստելու եղանակը:

28) Հիման, երես և սելու մնացորդը եւ սեւ դեղը (աչքը լնելու համար) գեղեցկացոցի՞չ են համարում թէ թժշկական միջոցներ:

29) Զե՞ն համարում բարնիսի ցեխը (նուբան) իբրև թժշկական միջոց եւ ինչ հիմնդութեան դէմ:

30) Ի՞նչ նպատակով են հիմայ դնում:

### Վ. ՀԻԽԱՆԴՐՈՒԹԵԱՆ ԵՒ ԲԺՇԿՈՒԹԵԱՆ ՎԵՐԱ- ԲԵՐԵԱԼ:

31) Ցուցակագրել ամեն տեսակի հիմնդութիւնները, որոնք գրյուղին, ունին ժողովրդի մէջ, հանդերձ ժողովրդական անուններով (անհականալի անունները պէտք է բացատրել):

32) Բացի ընդհանուր հիմնդութիւններից կան արդե՞օք որոշ տեղին յատուկ հիմնդութիւններ, ի՞նչպէս է օր. Գանձարի իլեարան:

33) Նկատել մանաքնի (լետարիա) դէպքերը:

34) Համարում են արդե՞օք իբրև հիմնդութիւն լուսատութիւնը (լուսատաշ), միջաւանչը (խիստիլիկը—կոստ-

մարց) եւ խելազարութիւնը: Ինչո՞վ են բացատրում այս  
հիւանդութիւնների առաջանալը:

35) Ինչով են բժշկում զանազան տեսակ հիւանդութիւնները, որոնք են՝ ախորժակի փակումն, ականջացաւը, ականջի խշոցը, ամործիքի ուռոյցը, այտուռոյցը (ֆլուս), այրուածքը, անգլիական ախտը, այրական անզօրութիւնը, անքնութիւնը, աշքացաւը, ատամնացաւը, արգանդաէջը (ուղարկութեամբ մատկու), արգանդատապը (воспаление матки), արգանդի ծոռիլը, արիւահոսութիւնը (քթից, լնդերից, կտրած տեղից, արգանդից ծննդաբերութիւնից առաջ եւ յետոյ, երեխայի պորտից եւ այլն), արիմ թքիլը, արեւահարութիւնը, բարակացաւը (թոքախտը), բերանի բորբոքումն, բերանի զարշահոսութիւնը, բերանի վէրքը, բլիթենը (մօզոլъ), բլացաւը, բորոտութիւնը (որոկազա), գլխացաւը, գլխի ճաքոցը (վեր ընկնելոց), գլխի պտոյտը, գլխի ուռոյցը, ղաշտանի դադարումն, ղաշտանի անկանոնութիւնը, ղեղնախտը (желтуха), ղժուարամարսութիւնը, ղողերոցքը, երիզառողն, երեսի պզուկներն, ընկերքի ընկնելու ուշանալը, թանշը (տեմорոյ), թարախակոյտը (нарывъ), թուլութիւնը, թուլատրութիւնը զանազան թոյներից, թքազնացութիւնը, լուծը, լուսնոտութիւնը, լսողութեան ծանրութիւնը, խելազարութիւնը, խզուկը, խիարուկը (бодохъ), խիպիլիկը (մղձտանը), խլութիւնը, խորուզիկը, ծաղիկը, ծծի ամրանալը, ծնընդաշը հոսումն, ծննդատեննդը, կաթնասնկախտը, կաթուածը, կայծուիկը (չիր, վերեծ), կանանց ստինքի պտուների ճաքճրիլը, կանանց սեռական անդամների բորբոքումը, կանիճը, կալոյտ հազը (կոկлюшъ), կատաղած շան կծածը, կարճատեսութիւնը (близорукость), կարմուկը, կեղցաւը (шанкръ), կիրկիրութիւնը (խզխզալը, ձայնի կրտուիլը), կողքացաւը, կողքի ծակոցը, կուպերի բորբոքումն, զորանուկը, կորուածքը, կըետի եւ մեղուի խայթածը, կըօճացաւը, հազը, հարինքո, հառբուխո, հեծկատանքը (զիռոտոցը), հեշտոցի իշնելը, հետոցը, հնդկախտը, ձեռների ճաքճրիլը, ծուակարկի ուռոյցը, ծմլումն (չասճъ), մատ-

նաշորթը (կծիպ), միզարգելութիւնը, միզաքարը, մունը (օչնցակա), մրտողութիւնը (որոշույժա), յօդացարը (քեռմա-  
տամօթ ՅԸ Հուկութիւնք), շարաւագնացութիւնը ականջից,  
շէքի պատուիլը, շրթունքների ծաքճքիլը, ոսկրաքեկումն,  
ոսկրախախումն, ոտների քրտնումն, ործկալը, ործելուծը (խօլերինա), որքիւնը, ուշագնացութիւնը, ուսուցքը (բկի,  
ականջի, այտի, ոտի, ծնկան և այլն), ջրգողութիւնը (Յօ-  
ճանկա), չերմը, սուսանակը (տրուերօ), ստինքների բորբո-  
քումն, սրտատրովիր (շերձեօնիուե), սրտախառնութիւնը,  
վաւաշախարը (սփոսաւսէ), վերջնաղիքի դուրս զալը, վէրքը  
(գնդակի, սրի, ծակելուց, անասունի կծած և այլն), տակը  
միզելը, տիկնակծիկը (կլզտրուկ-լաւեհ և Յօկմեն), ցըն-  
ցումները (ցցօրօնս), ցրտի տարածը, փայծաղի աճումն,  
փորացարը, փորկապութիւնը, փսխումն, քամին (ոսկրի, մկա-  
նունքի և այլն — քեռմատաչնօ), քոսը, քութէշը, օծի կծածը  
և այլն և այլն:

36) Ի՞նչ միջոցներ են գործ դնում, որ ամուլ կա-  
նայք երեխայ ծնեն:

37) Ի՞նչ բժշկական կամ մեկնայական միջոցների է  
դիմում կինը իւր արգանդի պտուղը ոչնչացնելու համար:

38) Ի՞նչ միջոցների են դիմում կանանց կաթը աւե-  
լացնելու համար:

39) Ի՞նչ են անում ցայլոջիլը ոչնչացնելու համար:

40) Ի՞նչ միջոց են գործ ածում պլիսի ոչիլի և անիծի  
դէմ:

41) Ի՞նչ համկացողութիւն ունի ժողովուրդը պահեցո-  
ղութեան մասին (ծիետա):

42) Ի՞նչ տեսակ կերակրներ, պտուղներ և այլն հի-  
անդի համար լաւ կամ վատ են համարում:

43) Գործ են ածում արդեօ՞ք որեւ իցէ միջոց արքե-  
ցողութեան դէմ:

44) Կայ ափիոն ընդունելու սովորութիւն:

45) Դիմէ արդեօ՞ք ժողովուրդը, որ կատ վարակիչ  
հիւանդութիւններ և կաքելի է հիւանդից վարակուիլ:

46) Ի՞նչ միջոցներ են գործ դնում վարակիչ հիւանդութիւնների դէմ վարակուելուց խոյս տալու համար:

47) Ի՞նչ միջոցների են դիմում օրիորդները իրենց մազերը աճեցնելու համար: Ի՞նչ միջոցներ են գործ ածում մազերը թափելու դէմ:

48) Ո՞ր տեսակ հիւանդութեան ժամանակ հիւանդի մազերը կտրում են կամ նրա գլուխը սափրում:

## VI. ՆԱԽԱՊԱՇԱՐՄՈՒԽՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ:

49) Ի՞նչով են բացատրում հիւանդութեան առաջանալը եւ նրա գլխաւոր պատճառը: Ի՞նչ զրադմունքից ինչ հիւանդութիւն է առաջանում:

50) Չե՞ն համարում որոշ հիւանդութիւնները իբրև կենդանի էակներ, ի՞նչ նմանութիւն են տալի ամէն մէկին եւ ո՞րտեղ են նրանք ընակում:

51) Ո՞ր սրբերն կամ շար ոգիններն ուղարկում են ժողովրդի մէջ հիւանդութիւն, ի՞նչ պէտք է անել, որ սըրբերը կամ ոգինները հիւանդութիւն շտարածեն ժողովրդի մէջ, ի՞նչ միջոցների պէտք է դիմել չիւանդանալու համար:

52) Ի՞նչ պէտք է անել, որ կայծակը չտայ մարդուն:

53) Ի՞նչ նշանակութիւն են տալի ծակատագրին հիւանդութեան դէպքում:

54) Ի՞նչով են բացատրում տարափոխիկ հիւանդութեան երեւան զալը, ո՞րտեղից է գոյանում տարափոխիկ հիւանդութիւնը, ազդո՞ւմ են նրանց երեւան զալոն զիստր աստղերը, ծիածանը եւ ուրիշ որանց նման երեւոյթները:

55) Ո՞ր սուրբը կամ հրեշտակը, ոգին ինչ հիւանդութիւն է ուղարկում ժողովրդի մէջ, ինչ պատճառով սրբերը, հրեշտակները եւ ոգինները հիւանդութիւն են ուղարկում:

56) Ի՞նչ են անում հիւանդութիւն պատճառող սրբերին, հրեշտակներին, ոգիններին մեղմացնելու համար, որ նրանք հիւանդութիւն շուղարկեն ժողովրդի մէջ կամ դադարեցնեն երեւան եկած հիւանդութիւնը:

57) Ի՞նչ ծէսեր են կատարում հիւանդութիւն պատճառող սրբի կամ հրեշտակի անունն իմասնալու համար:

58) Ի՞նչ ծէսեր են կատարում շարերից պահպանելու համար, որ նրանք հիւանդութիւն չպատճառեն:

59) Ի՞նչ են անում, որ աշքով շտան (թթիկներ անելը — թխտի վրայ զրած թլիսիմ՝ կամ յուռութք, վրան հուլունքներ կախել եւ այլն): Ի՞նչ են անում աշքով տուածից ազատելու համար (թոնիրը խմորէ գնդակ գցելը եւ այլն):

**Ծառաօթ.** Հաղորդել թթիկների բովանդակութիւնը եւ հուլունքների, քարեղէնների եւ ուրիշ առարկաների վերաբերեալ, որոնք կրում են իրանց վրայ աշքը տալու դէմ, չհիւանդանալու համար եւ այլն, մանրամասն տեղեկութիւն:

60) Պաս կամ կիրակի չե՞ն պահում, որ երեխաները չիւանդանան, ո՞ր սրբի անունով են պահում սլասը կամ կիրակին, ո՞ր օրերն է որոշած որա համար (մկան կիրակէ, սուրբ Կարապետի սլասը եւ այլն):

61) Ի՞նչ տեսակ նախապաշտմական ծէսեր են կատարում հիւանդի վրան, նրան քուժելու համար (հիւանդի կշռիլը, հիւանդ երեխային էշի տակից անցկացնելը, խեղուած եւ անընական կերպով մեռած մարդու գերեզմանի վրան լողանալը, նարեկ, սաղմոս կարդալը հիւանդի գլխի վրան եւ այլն):

62) Ի՞նչ տեսակ նախապաշտմական գործողութիւնն են կատարում միքանի տեսակ հիւանդութիւններից ազատուելու համար, ինչպէս են փայծաղի աճումն, տիկնակիծիլը, գորտնուկը, կարմիր քամին (քոյշա), ծննդկանի ուշաթափութիւնը, հեծկատանը (զերտալը), երեխայի նիշարութիւնը, հարբուխը եւ այլն եւ այլն:

63) Արուեստական խալը չէ՝ համարում ժողովուրդը իբրեւ հիւանդութեան դէմ առնող միջոց, մարմնի ո՞ր տեղի խալը ո՞ր հիւանդութիւնից է պահպանում:

**Ծառաօթ.** Ցանկալի է նկարագրել խալ շինելու ձևը եւ

ցոյց տալ մարմնի ո՞ր մասեսում ինչ տեսակ խալեր են շինում:

64) Ի՞նչ նշանակութին են տալիս ձեռքերի եւ պարանոցի մանեակներին, ի՞նչ հիւանդութիւններից նրանք պահպանում են, ո՞ր մետաղից պէտք է շինել այդպիսի մանեակները (չարչարանաց շաբաթուայ ուրբաթ օրը շենած սկզբաւտէ պարանոցի մանեակը պահպանում է մըղձաւանջից եւ այլն):

65) Կայ սովորութին մատաղ անել տարափոխիկ հիւանդութիւնների ժամանակ, ի՞նչ ծէսեր են կատարում այդ ժամանակ (թափօր անել, մատաղի արիւնով օծել մարմնի մասերը եւ այլն):

66) Ո՞ր հիւանդութեան համար յատկացրած է այս կամ այն ուխտատեղին:

67) Ի՞նչ նշանակութին են տռիս հանքային ջրերին, չե՞ն համարում նրանց իբրեւ սուրբ ջրեր, ի՞նչ ծէսեր են կատարում նրանց մէջ լողանալու կամ լուացուելու ժամանակ (ծունը դնել նրանց առաջ, մոմ կացնել, մատաղ անել, լոռութեամբ մօտենալ նրանց եւ այլն):

68) Չկա՞ն սուրբ աղքիւրներ, որոնց ջրերը քժշկում են ջերմից, ոռղեսոցքից և այլն, ինչ անուններ են տալիս այդպիսի աղքիւրներին:

**Ծանօթ.** Ցանկալի է ցուցակագրել բոլոր աղքիւրները և հանքային ջրերը, որոնք ժողովրդի կարծիքով սուրբ են եւ կարող են քժշկել այս կամ այն հիւանդութիւնից:

69) Չե՞ն համարում անձրեւի ջուրը հիւանդութիւն բուժող միջոց եւ ի՞նչ տեսակ հիւանդութիւններից կարող է քռաժել անձրեւի ջուրը: Ի՞նչ նշանակութին են տալի մայիս ամսուայ անձրեւի ջրին:

70) Կա՞ն սուրբ ծառեր, մացառներ, սրբազն անտառներ, որոնք քժշկում են հիւանդութիւններից (Շամախու գաւառի Գիւրջեան գիւղի մօտի սրբազն անտառը, Նախիջեանի գաւառի Հաջիվար գիւղի մօտի «Խուղ-դիւան»

ծառը եւ այլն): Ի՞նչ տեսակ հիւանդութիւններից են ըժըշկում այսպիսի ծառերը եւ անտառները, ի՞նչ տեսակ ծէսեր են կատարում, երբ հիւանդին ըերում են այս տեսակ սրբազան ծառերի եւ մացառների մօտ (խոնկ ծխել, մոմ կպցնել, շորի կտոր կապել, մատաղ անել, ծառի շորս կողմը պտըտել եւ այլն): Ի՞նչ նշանակութիւն են տալի այդպիսի ծէսերին:

71) Կա՞ն ուրիշ տեսակ սուրբ առարկաներ, որոնք քժշկում են այս կամ այն հիւանդութիւններ (լեռներ, քարեր, ժայռեր եւ այլն), ի՞նչ տեսակ ծէսեր են կատարում նրանցից օգնութիւն հայցելու ժամանակ:

72) Կա՞ն այնպիսի ընտանիքներ, որոնց անդամները հիւանդի մօտ զնալու ժամանակ վերջինը թեթեւութիւն է զգում:

73) Կա՞ն այնպիսի մարդիկ, որոնք կարող են հիւանդի միջից դուրս հանել շարին, սատանային, դեւին. ի՞նչ տեսակ ծէսեր են կատարում այս գործողութեան ժամանակ:

74) Կա՞ն գուշակողներ թէ հիւանդը կառողջանայ կամ կը մեռնի, ո՞վքեր են գուշակողները, ի՞նչ ծէսեր են կատարում գուշակելու ժամանակ:

75) Ի՞նչ են անում կատաղած մարդու վերաբերեալ, որ նա շոտ վախճանի (գլխի վրայ մօր ձեռքով հող մադելը եւ այլն):

76) Ի՞նչո՞վ են բացատրում մահաքունը (լետարիա):

77) Ի՞նչ են անում հոգեվարքը (αιωνία) թեթեւացնելու համար (աւետարան կարդալ գլխի վրայ եւ այլն), ի՞նչո՞վ են բացատրում հոգեվարքը:

78) Ի՞նչ նշաններով են իմանում, թէ հիւանդն արդէն վախճանել է եւ ոչ թէ ուշազնացութեան կամ մահաքնի մէջ է:

**Բ.****Է Ն Ց Ե Ն Ի Ը Ն Ե Ս Ա Ի Ն Ն Ե Ր Ի Վ Ե Ր Ա Բ Ե Ր Ե Ա Լ .****I. Հ Մ Դ Հ Ա Խ Ա Գ Բ Ե Ր Ա Բ Ե Ր Ե Ա Լ :**

1) Ցուցակագրել ընտանի անասունների տեղական անունները համեմատ նրանց սեռին եւ հասակին՝ ծիան, էշի, ջորու, ուլտի, գրաստի, զոմէշի, ոչխարի եւ այծի:

2) Նկարագրել բոլոր տեսակ ընտանի անասունների քնակարանը, լեռակուրը (ճարակը) եւ խմելու ջրի տեսակները:

3) Ցուցակագրել բոյսերի տեսակները, որոնք բունում են գիտի հանդում եւ արօտատեղերում, մէջ բերելով նրանց գիտնական անունները: Ո՞ր բոյսերը լինակար կամ օգտակար են համարում այս կամ այն տեսակ ընտանի անսուտնի համար:

4) Ի՞նչ ազդեցութիւն ունի ընտանի անասունի առողջութեան վրայ նրա տեղափոխութիւնը ձմեռանոցից (ողշաղից) ամարակոց (եայլաղ) եւ հակառակ դէպքում:

5) Ի՞նչպէս են սկահանում բեղմնաւորող կենդանիները՝ ցուլին, յովատակին (որց ծիան), խոյին, ամեկին (որց այծին) եւ այլն:

6) Ի՞նչ միջոցների են դիմում ընտանի կենդանիներին արուեստական կերպով մերժաւորելու համար:

7) Ի՞նչ խնամք եւ հոգատարութիւն են գործ դնում յոյի անասունների վրայ: Ի՞նչպէս են նրանց օգնում ծննդաբերութեան ժամանակ:

8) Ի՞նչպէս են սկահանում նորածին անասուններին: Ի՞նչպէս են վարժեցնում հասակն առած եղին, ծիուն, ջորուն, էշին եւ ուլտին հեծնելու, քեռնաւորելու եւ լծելու համար:

9) Ցուցակագրել բոլոր տեղական մականունները

(բառեր), որոնցով անուանում են այս կամ՝ այն ընտանիք կենդանուն:

10) Ի՞նչ տեսակ զրոշմներով են նշանում՝ այս կամ՝ այն անաստմներին: Ո՞վ է զրոշմ զնողը եւ ի՞նչպէս են անուանում նրան:

11) Նկարագրել զրոշմ զնելու եղանակը եւ զրոշմների ձեւերը:

**Ծառայ.** Տանկալի է ժողովել անաստմների զրոշմների նկարները:

## II. ՀԻՒԱՆԾՈՒԹԻՒՆ ԵՒ ԲԺՇԿՈՒԹԻՒՆ:

12) Ի՞նչ տեսակ հիւանդութիւնների են ենթարկում ընտանի անաստմները: Նկարագրել հիւանդութիւնների արտաքին տեսքը, ընթացքը եւ այլն:

13) Ո՞ր տեսակ հիւանդութիւն է առաջանում ժողովորի կարծիքով այս կամ՝ այն թյուփ կամ՝ ճարակից:

14) Ո՞ր հասակում եւ ի՞նչ տեսակ հիւանդութեան է ենթարկում այս կամ՝ այն ընտանի անաստմնը: Ո՞ր տեսակ անաստմնը չի հիւանդանում այս կամ՝ այն հիւանդութիւնով: Ո՞րը նրանցից առելի զիմացելոն է հիւանդութեանը:

15) Ո՞ր տեսակ անաստմնը հնշութեամբ է ենթարկում ժանուարի հիւանդութեան (ԿՍ.Վ) եւ որը նրանցից չի հիւանդանում այս ախտով:

16) Ի՞նչպէս են անուանում անաստարոյժներին: Ո՞վքեր են պարապում այս թժշկութիւնով: Ո՞րտեղ եւ ո՞ւմ մօտ են սովորել նրանք այս արուեստը: Օգտում՝ են նրանք ծեռագիր կամ՝ տպած թժշկարաններից:

**Ծառայ.** Հարկաւոր է մաներամնաը տեղեկութիւն տալ այսպիսի թժշկարանների մասին:

17) Կա՞ն անաստարոյժ մասնագէտներ անաստմների ուկրաքնելութեան եւ ուկրախաղութեան մէջ:

18) Ո՞վքեր են պարապում անաստմնին ներքինացնե-

Հու եւ ի՞նչ կերպով են ներքինացնում այս կամ այն անասունը:

19) Ի՞նչ դեղեր են գործ դնում անասունին այս կամ այն հիւանդութիւնից բժշկելու համար: Նկարսպանել դեղերի բաղադրութիւնը եւ նրանց պատրաստելու եղանակը:

**Ծանօթ.** Ցանկալի է առաջ բերել նիւթերի տեղական եւ գիտնական անունները:

20) Ի՞նչ միջոցների են դիմում ներքինացած անասունի վերքը բուժելու համար:

21) Ի՞նչ դեղեր են գործ ածում եւ ի՞նչպէս են բժշկելում անասունին ոսկրաբեկութիւնից եւ ոսկրախախտումից:

22) Ի՞նչ բժշկական միջոցների են դիմում վարակիչ եւ համածարակ հիւանդութիւնների ժամանակ:

23) Ի՞նչպէս են բժշկում վայրենի զազաններից վերատրուած անասունին: Ի՞նչ միջոցների են դիմում օձի եւ կատաղած շան կծածի դէմ: Ո՞ր անասունի վրայ օձի կծիլը չի ազդում:

### III. ՆԱԽԱԳԱԾԱՐՄՈՒԽՔՆԵՐԸ ՀՆՏԱՆԻ ԱՆԱՍՈՒՆԵՐԻՆ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ:

24) Ի՞նչ հասկացողութիւն ո՞նի ժողովուրդը այս կամ այն անասունի ծագման մասին: Ո՞րտեղից եւ ի՞նչից է գոացել նրա կարծիքով այս կամ այն ընտանի կենդանին:

25) Կա՞ն սրբեր, հրեշտակներ, ոգիներ եւ այլն, որոնք հովանաւում են եւ պահպանում այս կամ այն ընտանի անասունին:

26) Ո՞ր սրբավայրերում եւ ի՞նչ հիւանդութիւնից առողջանում է հիւանդացած անասունը: Ցուցակագրել այդ տեսակ սրբավայրերը:

27) Ի՞նչ տեսակ ծէսեր են կատարում, եթե հիւանդ

անստուին տանում են այս կամ այն սրբավայրը նրան-  
առողջացնելու համար:

28) Ուրիշ ի՞նչ տեսակ սնամաշտական միջոցների են  
դիմում հիւանդ անասունին քժշկելու համար:

29) Ի՞նչ տեսակ աղօթքներ, ասացուածքներ, թովչութին եւ այլն գործ են դնում, որ անասունին ազատեն օճռից, զազաններից, աշք տալուց եւ այլն:

30) Ի՞նչ միջոցների է դիմում տանտիկնը կռվի, գումէշի, ոչխարի և այծի կաթն աւելացնելու համար։ Կա՞ն կաթն աւելացնող սրբավայրեր և ի՞նչ ծէսեր են կատարում այդպիսի սրբավայրերը այցելելու ժամանակ։

ՅԱ) ԽԱՀ ԼԱՐՁԻՔ ունի ԺՈՂՈՎՈՐԴԸ ՎԱՐԱԿԻՑ ԱԽՈՒՎ  
ՀԻւանդացած անասունին սպանելու վերաբերմամբ:

32) Գո՞րծ են ածում սպանած, հիւանդ կենդանու միսը:  
Նրա ո՞ր մասերը ոտելու համար մաքուր կամ անմաքուր  
են համարում: Կատարո՞ւմ են որեւիցէ ծէս, կամ զո՞րծ  
են ղնում որեւիցէ միջոց մորթած հիւանդ անասոնի միսը  
մաքրելու համար:

